

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1784 -Ա

 2009 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒՄՆԵՐԻ ՂԵՍԻՆՆԵՐԻ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Էվրիկոմպ-Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 30-ին կնքված «30.03.09թ. կնքված N ԱՊՁԲ-09/12-1 պայմանագրի» փոփոխություն N 2-ը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված «Մատակարարման պայմանագիր» N ARM 506-G-02-T-AG0734 պայմանագիրը՝


Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Էվրիկոմպ-Թեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 30-ին կնքված «30.03.09թ. կնքված N ԱՊՁԲ-09/12-1 պայմանագրի» N 2 փոփոխությամբ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

միջև 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված «Մատակարարման պայմանագիր» N ARM 506-G-02-T-AG0734 պայմանագրով ձեռքբերված գույքը՝ համաձայն Հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա.Կարապետյանին՝
 - 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետից բխող ֆինանսական հաշվարկների և նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ա.Մանուկյանին:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ



Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2009 թվականի «*Նոյեմբեր*» «16»-ի N *1789-Ա* հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

N	Ապրանքի անվանումը	Քանակը	Գումարը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)
1.	Սառնարան	8	774 000
2.	Լուսամփոփ սեղանի	5	25 000
	Ընդամենը		799 000